*ՄԻԱՐԱՐ-ՀԱԿԱՄԻԱՐԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՍԿԲՆԱՎՈՐՈՒՄԸ 14-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ ԵՎ ՍՍԻ 1307 Թ. ԺՈՂՈՎԸ

Դավիթ Թինոյան

14-րդ դարասկիզբը Կիլիկայի հայոց թագավորության համար իրավամբ բարդ ժամանակաշրջան էր. այն բարդ էր թե՛ տարածաշրջանային փոխատեղումների ու ընթացող գործընթացների և թե՛ ներքաղաքական խորացող հակասությունների պատճառով: Հեթում 2-րդի իշխանության ընդմիջումներով գահակալման ժամանակաշրջանը[1] նշանավորվորվեց հայ իրականության մեջ մինչ այդ աննախադեպ երևույթի՝ հասարակության ներսում դավանաբանական խնդրով պայմանավորված հակադիր հոսանքների ձևավորմամբ, հոսանքներ, որոնք պետք է ստանային միարար և հակամիարար անվանումները:

Պետք է նշել, որ Կաթոլիկ եկեղեցու հետ միավորման գաղափարը հայ իրականության մեջ ծնունդ էր առել դեռ 12-րդ դարավերջին, բայց այն ըստ էության աննշան ադեցություն ուներ ընկերային կյանքի ոլորտների վրա, որում անշուշտ դերակատարում ուներ նաև այն հանգամանքը, որ հայոց միապետներն՝ սկսյալ դեռ Լևոն 1-ինից, գնալով մասնակի զիջումների արևմտաեվրոպական վեհապետների ու միապետների հետ հարաբերություններում, Հայոց եկեղեցին դիտարկում էին որպես պետական անվտանգության կարևորագույն բաղկացուցիչ: Այդ մոտեցումը ամենևին էլ պատահական չէր և մաս էր կազմում պետական ընդգծված քաղաքականության. ընդհանրապես միջնադարյան աշխարհընկալման տիրույթում ազգային և հաճախ նաև պետական պատկանելության ընկալումը դրսևորվում էր դավանանքի միջոցով: Այդ առումով Հայոց եկեղեցու հետևորդ լինելը ենթադրում էր պատկանելություն հայկական մի-

---

* Հոդվածը ներկայացվել է 20.02.2020 թ., գրախոսվել է 11.03.2020թ., ընդունվել է տպագրության 25.04.2020 թ.:

[1] Թեպետ հրաժարումների ժամանակագրությունը պարզելը երբեմն բավական դժվար գործ է հանդիսանում. Տե՛ս A. D. Stewart, The Armenian kingdom and the mamluks: War and diplomasy during reigns of Hetum II. Leiden-Boston-Koln,2001, p. 96. Rudt Collenberg,The Rupenides, Hethumides and Lusignans: The Structure of the Armeno-Cilician dynasties, Paris,1963, p. 71:

ջավայրին: Այստեղ առարկայական դրսևորում էր ձեռք բերում նաև այն հանգամանքը, որ Հայոց եկեղեցու հետևորդը, նույնականանալով հայկականության հետ, ինքնաբերաբար դիտարկվում էր նաև հայոց թագավորի հնարավոր ենթակա[1]: Սակայն իրադրությունը կտրուկ կերպով փոխվեց Հեթում 2-րդի գահակալման շրջանում (ընդհատումներով 1289-1307թթ.): Հոդվածի շրջանակներում փորձ է կատարվել նորովի մեկնաբանել հայոց պատմության այս բարդ ժամանակաշրջանը, մասնավորապես Հեթումի եկեղեցական քաղաքականությունը, որը միտված էր պետության արտաքին անվտանգության միջավայրի ապահովմանը:

Հեթում 2-րդի կերպարը

Հեթումը դեռ չէր ստանձնել միապետի պարտականությունները, երբ դեռ հոր՝ Լևոնի կենդանության շրջանում ձեռնադրվեց որպես ֆրանցիսկյան վանական: Լինելով ավագ որդին՝ նա, ըստ օրենքի, պետք է զբաղեցներ հոր գահը, բայց անգամ այս պարագայում նա հրաժարվեց ամուսնությունից և զարմ ունենալու հնարավորությունից: Առաջնության կարգը խախտելու համար դեռ Լևոնի կենդանության օրոք ամուսնացավ հաջորդ որդին՝ Թորոսը, որից ծնված որդին էլ, ըստ օրենքի, պետք է հաջորդեր հորեղբորը: Հոր մահից հետո Հեթումը հռչակվեց հայոց թագավոր, բայց թագադրություն՝ որպես այդպիսին, տեղի չունեցավ, որն էլ պատճառ դարձավ, որ շատ աղբյուրներում Հեթումը չի հիշատակվում որպես արքա, այլ հիշվում է որպես թագապահ[2], աթոռապահ[3] և այլ տարբերակներով:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ սա նոր երևույթ էր հայոց պատմության համար, որոշակիորեն հազվադեպ պատահող նաև համաշխարհային պատմության համար, երբ երկրի փաստացի և իրավական ղեկավարը ոչ միայն չի թագադրվում, ոչ միայն չի ամուսնանում՝ սեփական զարմը շարունակելու միանգամայն բնական ձգտումով, այլև այլ դավանանք է ունենում՝ ի հակադրություն պետական գործող դավանանքի:

---

[1] Հենց դա էր ենթադրում Ամենայն հայոց թագավոր տիտղոսը՝ որպես բոլոր հայերի թագավոր:

[2] Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, **կազմեց Ա. Ս Մաթևոսյանը**, Երևան, 1984, էջ 660:

[3] Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ **Ա. Մաթևոսյանի,** Երևան, 1988, էջ 336:

Փաստելի է, որ Հեթումի դավանափոխ լինելու օրինակը բավական տարածում գտած երևույթ պետք է դիտարկել 13-րդ դարավերջի հայ իրականության, հատկապես դրա աշխարհիկ վերնախավի համար: Դրա լավագույն օրինակներից պետք է դիտարկել թագավորական ընտանիքի մերձավոր և ազդեցիկ տոհմերից սերվող, Հեթում 1-ին թագավորի եղբայր Օշինի որդի Հեթում պատմիչի օրինակը, որը, լինելով երկրի ազդեցիկ ընտանիքներից մեկի ներկայացուցիչը, նույնպես հանդես եկավ որպես կաթոլիկ հոգևոր ծառայության անցած անձ: Անշուշտ, նախկինում էլ եղել էին ազդեցիկ այլադավան իշխանական տների ներկայացուցիչներ հայ իրականության մեջ, դրանցից, օրինակ, հիշատակելի է Սիր Ադանը, որը Զաբել արքայադստեր խնամակալներից մեկն էր: Բայց, ըստ ամենայնի, վերջինս հունադավան էր (նույնիսկ կարծիք կար, որ նա ազգութամբ ևս կարող էր հույն լինել), որը տվյալ ժամանակաշրջանում չէր կարող իրական վտանգ ներկայացնել հայոց եկեղեցու դիրքերի անսասանության տեսանկյունից:

Այս պարագայում իրավիճակն իրոք աննախադեպ էր: Հետագա տարիներին քանիցս Հեթումը հրաժարվեց գահից. վերջին անգամ 1301 թ. հօգուտ վաղամեռիկ եղբոր Թորոսի որդու՝ մանկահասակ Լևոնի: Բայց այս ամբողջ ընթացքում կրոնավոր-միապետը փաստացի իր ձեռքում էր պահում իշխանության ղեկը: Հեթումը, անշուշտ, հայ իրականության մեջ առավել հակասական, փոփոխական և նաև խորքային առումով սեփական երկրին ու հասարակությանը մեծ խնդիրների առջև կանգնեցրած միապետներից է հանդիսանում: Փաստացիորեն նրա գործունեության առանցքային նպատակը դարձավ Կաթոլիկ եկեղեցու հետ միաբանությունը, դեպի որն էլ միտված էր նրա քաղաքական գործունեությունը:

Այսպիսով, իրավական առումով ձևավորվել էր բավական հակասական իրադրություն, երբ հայոց պետության ղեկավարը փաստացի այլ դավանանքի հետևորդ էր: Նույնիսկ 1222 թ., երբ Անտիոքի արքայազն Ֆիլիպը օծվեց հայոց թագավոր, վերջինս պարտավորվեց ընդունել հայկական դավանանքը: Անշուշտ, այլ խնդիր է, թե որքանով նա պահպանեց իր խոստումը, բայց իրավական առումով Ֆիլիպի գահակալումը որևէ դավանաբանական խնդիր չհարուցեց, սակայն աննախադեպ իրավիճակ էր ձևավորվել: Հարդյունս արդեն 1289 թ. սկսյալ Հեթումը փաստացի ձեռնամուխ եղավ եկեղեցիների միավորման գործընթացին:

Հեթում 2-րդի գործունեությունը

Հենց այդ համատեքստում պետք է դիտարկել Կոստանդին Կատուկեցու աթոռազրկումը, Ստեփանոս Հռոմկլայեցու կարճ և կամազուրկ կառավարումը, երբ աթոռը փաստացի կառավարվում էր Հեթումի մերձավորագույն զինակից Գրիգոր Անավարզեցի եպիսկոպոսի կողմից: Այդուհետ քայլ առ քայլ Գրիգորը Հեթումի հետ միասին 1290 թթ. ընթացքում փաստացի ձեռնամուխ է լինում երկու եկեղեցիների աստիճանական միացման գործընթացին: Այն բավական բարդ և ժամանակատար գործընթաց էր, որը շատ լավ ընկալում էին նաև գործող աշխարհիկ և հոգևոր ղեկավարները. դա էր պատճառը որ մեկ տասնամյակ Գրիգորը ծիսական և դավանաբանական նորամուծություններ էր կատարում հայոց եկեղեցում:

Փաստենք նաև, որ նա, հավատարիմ լինելով այսպես կոչված «փափուկ ուժի» տեսությանը, «արևելցիների» և հատկապես այդ խմբավորման առաջնորդներից Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի հանդեպ բավական զգուշավոր քաղաքականություն էր վարում: Արքան և կաթողիկոսը, հանդիպելով ընդվզման հնարավոր փորձի, իրենք էին նահանջում սեփական պնդումներից՝ նախընտրելով շրջապատել ընդդիմադիրներին սեփական ազդեցության գործակալներով: Կաթողիկոսի բոլոր փորձերը և նամակները՝ ուղղված «արևելյան» թեմերի հոգևորականներին, փաստացիորեն մերժվում են վերջիններիս կողմից[1]: Չնայած այն հանգամանքին, որ Հեթումի նկատմամբ հայ պատմիչները հիմնականում դրական արտահայտություններ են գործածում, և դա, ինչպես իրավացիորեն նկատել է ժամանակաշրջանին խորագիտակ Լ. Տեր Պետրոսյանը, պայմանավորված էր նաև արքայի հոգևոր ծառայություն անցնելու հանգամանքով[2] (չմոռանանք, որ ժամանակի հիշատակարանների հեղինակները գրեթե բացառապես ներկայացնում էին հենց հոգևոր դասը), այդուհանդերձ հանդիպում են նաև հակադիր հիշատակումներ, որը, փաստենք, այդքան էլ ընդունված երևույթ չէր հայ իրականության մեջ, և դրա առկայությունը խոսում է արքայի նկատմամբ առկա իրական վերբերմունքի մասին: Այդ առումով ուշագրավ է Գևորգ Սկևռացին, որը

---

[1] Մանրամասն տես Պատմութիւն նահանգին Սիսական, **արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի** Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 450-463:

[2] Տես **L. Տեր Պետրոսյան,** Խաչակիրները և հայերը, հ. ատոր Բ, Երևան, 2007, էջ 378:

լինելով Հայ եկեղեցու ջերմեռանդ հետևորդներից, իր խոսքում Հեթումին նույնիսկ չի հիշատակում որպես արքա. ճիշտ է՝ Հեթումը թագավորի իրավական կարգավիճակ չուներ, այդուհանդերձ մնացյալ հայ ժամանակակիցներից շատերը հենց այդպես են պատվում նրան: Ավելին, Սկևռացին Գրիգոր Անավարզեցու նկատմամբ ևս բավական բացասական դիրքորոշում ունի (չմոռանալով սակայն փաստել վերջինիս գիտական ունակությունները). հեղինակը ապրել է 13-րդ դարավերջին - 14-րդ դարասկզբին և եղել է ժամանակի ազդեցիկ հասարակական գործիչ, ուսուցչապետ, իր աշխատանքը գրել է Օշին թագավորի կառավարման շրջանում, բայց եղել է ականատեսը նաև Հեթումի և եղբորորդու գահակալման շրջանների: Սակայն Սկևռացին բավական բացասական վերաբերմունք ունի նաև Հեթումի անձի վերաբերյալ. «Բայց նախասացեալն Գրիգոր եպիսկոպոս անխափան զհետ Հեթմոյ շրջէր և ի կիր արկեալ կապտէր և գերի տանէր, որ թէ գոյր մասն ինչ աատ բարս նորա: եւ արհամարս և ծիծաղեկիս զաւրէնս որով վարին հայք, ցուցան էր… Եւ ապա յայլ մեքենայս մտին (արքան և կաթողիկոսը- Դ. Թ.), և փառամոլութեան և ագահութեան ախտիւ պատրել զսուրբն կարծէին»[1]:

Այդուհանդերձ պետք է փաստենք մեկ կարևոր հանգամանք. որքան էլ Հեթումը անկայուն և թուլակամ անձնավորություն հանդիսանար, որքան էլ Գրիգորի հանդեպ բացասական ընկալում լիներ (թեպետ հանուն ճշմարտության պետք է փաստել, որ Գրիգորի անձնային որակների հանդեպ բավական դրական վերաբերմունք կար, նույնիսկ հակընդդեմ խմբավորման ղեկավար Ստ. Օրբելյանի կողմից)[2], այդուհանդերձ վարվող քաղաքականության մեջ գերիշխող էր քաղաքական շահի գիտակցումը: Այստեղ առկա էր պետության և դրա պատասխանատուների կող-

---

[1] **Է. Բաղդասարյան,** Գևորգ Սկևռացու վարքը, Բանբեր Մատենադարանի, 1964, էջ 428:

[2] «Յետ որոյ ծնրահանգոյց գագաթամբ ողջունէ գլուխդ իւր պանծալի,սխրալիդ բնաւից, զչքնաղդև զնորոգ դերահրաշեալդ ի Հոգւոյն զԳրիգորիոս հայր հանուրց սեռից Հայկայ, և կաթողիկոս տիեզերական…»: Հարկավ, Ստ. Օրբելյանը՝ որպես Հայ Առաքելական եկեղեցու առանցքային թեմի առաջնորդ, չէր կարող հակառակ կերպ ներկայացնել կաթողիկոսին, բայց նախ կարող էր և ավելի չեզոք շարադրել, և աչքի է զարնում իրական հարգանքը վերջինիս անձի հանդեպ: Տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական, **արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան** արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 451:

մից աշխարհաքաղաքական տեղաշարժերի նկատմամբ գործունեության փոփոխություն՝ միտված պետության կայունությանն ու հետագա գոյությանը: Լիովին այլ հարց է արդեն, թե որքանով էր դա արդարացված (ըստ էության պատմությունը ցույց տվեց, որ արդարացված չէր), բայց դա փաստ է, որ նույն քաղաքականությունը որոշակի փոփոխություններով շարունակվեց նաև հինգ տասնամյակ ևս հաջորդ երկու միապետների Օշինի և Լևոն 4-րդի կողմից[1]:

Հարկ է փաստել, որ սկսած դեռ Աբաղա իլղանի կառավարման շրջանից՝ մոնղոլների տարածաշրջանային քաղաքականությունը ևս ուներ ընդգծված «եվրոպամետ» ուղղվածություն: Մոնղոլները Առաջավոր Ասիայում հաստատվելուց հետո տասնամյակներ շարունակ դիտարկվում էին որպես հավանական «ապագա քրիստոնյաներ»: Չնայած այն հանգամանքին, որ սկսած Ղազանից՝ նրանք ընդունեցին մահմեդականություն, այդուհանդերձ նրանք շատ լավ էին ըմբռնում տարածաշրջանի քաղաքական իրականությունը և հասկանում էին, որ առանց օժանդակության նրանց համար շատ դժվար կլինի պահպանել քաղաքական ադեցությունը Առաջավոր Ասիայում. դա էր մոնղոլական բազմաթիվ պատվիրակությունների ուղարկման պատճառը Եվրոպա: Այդ առումով հայոց թագավորությունը, որը այդ ժամանակաշրջանի դրությամբ պահպանում էր սեփական գոյությունը մոնղոլական օժանդակության շնորհիվ, ևս պետք է գնար նման օժանդակություն փնտրելու ճանապարհով, որի համար, ի տարբերություն մոնղոլների, հայերից պահանջվում էին որոշակի դավանաբանական զիջումներ:

Հեթում 2-րդի վերաբերյալ ևս մեկ կարևոր հանգամանք փաստենք: Վերջինս, իրապես, պատմագիտության մեջ ներկայացվում է որպես թուլակամ անձնավորություն, երբ քանիցս հրաժարվեց գահից՝ հօգուտ եղբայրների և ապա եղբորորդու: Որ վերջինս փոփոխական բնավորությանտեր անձ էր, փաստում են նրա՝ գահից հեռանալու առնվազն երեք դեպքերը: Այդուհանդերձ կարծում ենք, որ նրա հրաժարականները առավելապես քողարկված կառավարելուն միտված քայլեր էին: Այսպես, վերջին անգամ՝ 1301 թ., երբ նա հրաժարվեց գահից՝ հօգուտ վաղամեռիկ եղբոր՝ Թորոսի որդու Լևոնի՝ փաստացի թագադրելով 12-ամյա երեխային, նա շարունակեց իր ձեռքում պահպանել երկրի կառավարման

[1] Որոշ դրսևորումներով այն շարունակվեց մինչև թագավորության կործանումը:

ղեկը: Ըստ ամենայնի այդպես էր եղել նաև Թորոսի պարագայում, հակառակ դեպքում նա ուներ ևս երկու եղբայր՝ Ալինախը և Օշինը, որոնց կարող էր վստահել գահը, որոնք նախորդ փոթորկահույզ տասնամյակում՝ 1290 թթ., պահպանել էին հավատարմությունը իրեն, և որոնցից Օշինը առնվազն, ինչպես ցույց տվեց հետագա ընթացքը, կիսում էր Հեթումի դավանաբանական և քաղաքական մոտեցումները: Այս պարագայում մանուկ արքայի ընտրությունը պայմանավորված էր բացառապես իշխանությունը իր ձեռքում պահպանելու նպատակադրմամբ, երբ փաստացի իշխելով, այդուհանդերձ քաղաքական պատասխանատվության բեռ իր ուսերին Հեթումը չէր կրում: Սսի ժողովը, որն իր մեծ ադեցությունն ունեցավ հայ իրականության երկփեղկման հարցում, ուներ իր նախապատմությունը. 1290 թթ. երկրորդ կեսից սկսած կաթողիկոսարանի կողմից քարոզվող և ներդրված ծիսական նորամուծությունները իսկական խառնաշփոթ էին ստեղծել Հայ եկեղեցու ներսում: Ի հայտ էր եկել եկեղեցական նոր ժողով գումարելու անհրաժեշտություն, որի մասին երկու անգամ գրում է Գիգոր Անավարզեցին սկզբում Հեթումին, ապա և Լևոն 3-րդին[1]: Մ. Օրմանյանը վերոգրյալի մասին նշում է. «Նկատողութեան արժանի է որ Անաւարզեցին չի համարձակիր իր կաթողիկոսական իշխանութեամբ հրաւիրել եկեղեցական ժողովը, ինչը, որ կանոնական ձեւը կը պահանջէ, այլ առաջ Հեթումի, կը դիմէ մտերմական նամակովը, եւ յետեյ Լեւոնի կը գրէ պաշտոնական թուղթովը... Անտարակոյս Անաւարզեցին չէր կրնար անգիտանալ իրեն դէմ եղած հակակիր գացումները եպիսկոպոսութեան մեծ մասին մէջ, եւ կը խիթար որ չի յարգուիր իր հրաւէրը, եւ կանխիկ դուռ կը բանար խնդիրներու»[2]:

Դժվար է չհամաձայնել մեծանուն գիտնականի առաջ քաշած այս տեսակետին: Կարծում ենք՝ ոչ միայն «արևելյան» եպիսկոպոսների, այլ նաև հենց բուն Կիլիկիայի հոգևոր դասի ներկայացուցիչներից շատերի մոտ Անավարզեցին չուներ այն հեղինակությունն ու հարգանքը, որը հնարավորություն կտար իր համար ընդունելի որոշումներ կորզել ժողովականներից, այլ էր սակայն աշխարհիկ առաջնորդների պարագան, որոնց հրավիրած ժողովը արդեն հոգեբանական տեսանկյունից առավել փոքր հնարավորություն կունենար ընդվզելու: Դրան զուգահեռ պետք է

---

[1] **Կ. Գալանոս,** Միաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցւոյն Հռովմայ, հ. 1, Հռոմ, 1690, էջ 456:

[2] **Մ. Օրմանեան**, Ագապատում, Երևան. 2001, հատոր Բ, սյուն 2080:

նշել նաև, որ այս խնդրանքները ըստ ամենայնի նախապես համաձայնեցված են եղել նաև Հեթումի հետ: Ըստ Մ. Օրմանյանի՝ երկու նամակները գրվել են 1303-1305 թթ. միջակայքում. 1303 թ. Հեթումը զբաղված էր մոնղոլների հետ Ասորիք կատարած անհաջող արշավանքով[1], հաջորդ տարի արդեն մամլուքները հարձակվեցին հայոց թագավորության վրա: Նույն տարում մահացավ Ղազան իլխանը, և Հեթումը հարկադրված էր մեկնելու Իրան՝ նոր Օլջեյթու իլխանին իր հավատարմությունը հայտնելու համար: Բացի այդ՝ Հեթումի այցելության նպատակներից էր իլղանության հպատակ քրիստոնյաների հարկային բեռի՝ ջիզիեի թեթևացումը և հակամամլուքյան ճակատի ամրապնդումը:

Այսպիսով, արտաքին խնդիրները որոշակիորեն խոչընդոտեցին արքայի և կաթողիկոսի դավանաբանական ծրագրերի իրականացմանը: 1306 թ. արդեն, երբ դեռ Լևոնը չափահաս չէր, հունիսին տեղի ունեցավ թագադրման հանդիսավոր արարողությունը. «...Ի թուիս ՉԾԵ (1306) եդ յաթոռն զեղբորորդին իւր Թորոսի Լևոն մանուկ տիաւք և աւծին նա թագաւոր Հայոց ի վերայ Կիլիկիոյ»[2]: Վերջինիս գահակալումը, սակայն, բավական կարճատև եղավ[3]:

3. Սսի եկեղեցական ժողովը

Սսի եկեղեցական երկար սպասված ժողովը տեղի ունեցավ 1307 թ. մարտին, բայց այդ ժողովի հիմնական կազմակերպիչը Գրիգոր Անավարզեցին չհասցրեց իրականացնել իր նպատակը: Անավարզեցու մահը Մ. Օրմանյանը տեղադրում է հենց 1307 թ.՝ նշելով, որ վերջինս ժողովից մի փոքր՝ հավանաբար մեկ-երկու ամիս առաջ մահացավ[4]: Ս. Անեցու Շարունակողը (18-րդ դարում ստեղծագործած), չնշելով կաթողիկոսի մահվան հանգամանքները և ժամանակը, փաստում է. «Տէր Կոստանդին ամս ԺԵ(15), սա հրամանաւ Հեթմոյ ջուր էարկ ի սուրբ խորհուրդն, եւ զտօնս առնէր ըստ նմանութեան ֆռանկաց, յորով սպանմունք եղեն յո-

---

[1] Տե՛ս **Ս. Տեր-Ներսեսյան**, Կիլիկյան Հայաստանի թագավորությունը, Լ. Տեր Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 409:

[2] Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, **կազմեց Վ. Հակոբյանը**, Երևան,1956, էջ 170:

[3] Տե՛ս V. Langlois, Le tresor des chartes d'Armenie ou Cartulaire de la Chancellerie royale des Roupeninens, Venise,1863, p. 166-175

[4] **Մ. Օրմանեան**,նշվ. աշխ. սյուն, 2084:

լովք»[1]: Կաթողիկոսի մահը յուրատեսակ առումով «օգտավետ» է լինում Հեթումի համար. անհրաժեշտ էր եկեղեցական ժողով՝ նոր կաթողիկոս ընտրելու համար: Ըստ այդմ հնարավորություն էր ընձեռնվում նաև համատեղելու և քննարկելու երկու եկեղեցիների միավորման հարցը: Հայոց պետության համար այդ բախտորոշ ժողովը իր աշխատանքները սկսեց 1307թ. մարտի 19-ին՝ Ծաղկազարդի տոնի օրը[2]: Բավական հետաքրքրքական է ժողովի մասնակից հոգևորականների ցանկը: Այսպես, հարցին խորագիտակ Կ. Գալանոսը սկզբնապես ներկայացնում է մասնակից 26 եպիսկոպոսների, որոնցից 16-ը Կիլիկիայից, մնացյալ հինգը ժամանել էին թագավորությանը կից թեմերից, ևս հինգը ներկայացնում էին բուն Մեծ Հայքը, որոնց մեջ հիշատակման արժանի է թերևս Անիի եպիսկոպոս հիշատակվող Վարդանը[3]: Քիչ հետո, սակայն, նույն հեղինակը արդեն ներկայացնում է 36 եպիսկոպոսների ցուցակը, որտեղ արդեն կան թե՛ ավելացումներ և թե՛ նախորդ ցուցակից պակասող հոգևորականների անուններ: Մասնավորապես արդեն նշված չէ Անիի եպիսկոպոսի անունը: Մ. Չամչյանը իր հերթին նշում է. «Եկին յայնժամ և գումարեցան յարքայանիստ քաղաքն Սիս քառասուն և մի եպիսկոպոսունք, յորոց բազումք յարևմտեան կողմանց էին»[4]:

Իսկ Մ. Օրմանյանը վերոգրյալի վերաբերյալ նշում է. «Քանի որ ստոյգ բացատրութիւն չկայ կրնանք ըսել, թէ պակաս եղողները չհաւանելով մեկնողներ են, իսկ աւելցուածներ վերջէն հասնելով կամ ձեռնադրելու գալով ստորագրելու պարտաւորուեր են»[5]: Այս պարագայում դժվար է չհամաձայնել հեղինակի հետ: Հատկանշական է, որ ժողովին ներկայացված չեն եղել Սյունյաց և այսպես կոչված «բուն արևելից» թեմերի ներկայացուցիչները: Հարկավ, դա պայմանավորված էր վերջիններիս՝ դավանաբանական քաղաքականության հանդեպ վարած կտրուկ բացա-

---

1 **Սամուէլ Անեցի և Շարունակողներ**, Ժամանակագրութիւն, Ադամից մինչև 1776 թ., աշխատասիրությամբ Կ. Մաթեոսյանի, Երևան, 2014, էջ 270:

2 Առավել մանրամասն տե՛ս Գ. Հարությունյան, Քրիստոնեական եկեղեցիների համընդանրության, գաղափարը Սսի 1307 թ. ժողովում, Հայկազեան հայագիտական հանդես, Հատոր ԺԴ, Բեյրութ, 1994, էջ147-163:

3 **Կ. Գալանոս**, նշվ. աշխ, 455:

4 **Մ. Չամչյանց**, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թ.) Գ հատոր, Երևան, 1984, էջ 309:

5 **Մ. Օրմանեան**, նշվ. աշխ., սուն 2087:

սական դիրքորոշմամբ, որի համար արքան նախընտրելի էր համարել ուղղակի չհրավիրել նրանց: Սա, անշուշտ, հայ եկեղեցու օրինակարգության խաթարման բացահայտ դրսևորում էր, որը չներվեց ժամանակակիցների կողմից: Եպիսկոպոսներից զատ՝ ժողովին մասնակցում էին նաև տասը վարդապետներ: Հետաքրքրական է, որ նրանք բոլորն էլ ներկայացնում էին Կիլիկյան թեմերը և այդտեղ գործող վանական համալիրները: Սրանց հաջորդում են արդեն աշխարհիկ ավատատերերը պատանի Լևոն թագավորի և Հեթումի գլխավորությամբ, ինչպես նաև քահանաների և կրոնավորների բազմությունը[1], որը, կարելի է ենթադրել, նույնպես պետք է ներկայացներ Կիլիկիան և կամ առավելագույնը մերձթագավորական թեմերը:

Կարող ենք փաստել, որ այս ժողովի գումարմանը Հեթումը ձգտել էր հասնել իր գիտակցական կյանքի առնվազն երկու տասնամյակ: Սակայն, դրանով հանդերձ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ժողովի մասնակիցները փաստացիորեն ընտրվել էին հենց Հեթումի կողմից նրա բոլոր որոշումները անխոչընդոտ «դակելու» համար, այդուհանդերձ թագավորահայրը ուներ կասկածներ, վախեր ժողովի որոշումների և դրա հնարավոր հետևանքների վերաբերյալ. ահա որն էր պատճառը, որ առաջին հայացքից դարակազմիկ նշանակություն ունեցող ժողովի աշխատանքները ավարտվեցին նույն օրն ևեթ: Ըստ էության որևէ տեսակի բովանդակային քննարկումներ չեն ընթացել ընդունված փաստաթղթի վերաբերյալ. Հեթումը ներկայացնում է հանգուցյալ կաթողիկոսի կազմած փաստաթուղթը, որն էլ վավերացնում են ժողովականները: Սա ոչ այլ ինչ էր, քան Կաթոլիկ եկեղեցու հետ միավորման որոշում: Ըստ ամենայնի՝ այն «արևելցի» եպիսկոպոսները, որոնք ներկայացված չեն փաստաթուղթը ստորագրողների շարքում, հեռանում են ժողովի սկզբից ևեթ, երբ պարզ է դառնում, որ որոշումն արդեն ընդունված է: Եթե ընդհանրացնենք փաստաթղթում տեղ գտած և հաստատված որոշումները, դրանք հիմնովին վերացնում էին երկու եկեղեցիների միջև առկա դավանաբանական հակադրությունները ամբողջությամբ. Հայոց եկեղեցին ընդունում էր հայերի կողմից չընդունված նախորդ տիեզերական ժողովների ընդունած որուշումները, լուծում էր ստանում առանցքային բանավեճի հարցը, ընդունվում էր Քրիստոսի երկու բնության վերաբերյալ ուսմուն-

[1] Տե՛ս **Կ. Գալանոս**, նշվ. աշխ., էջ 460:

քը, որի դեմ գրեթե մեկ հազարամյակ պայքարում էր Հայոց եկեղեցին, փոխվում էր ամբողջ տոնացույցը՝ համապատասխանեցնելով Կաթոլիկ եկեղեցուն[1]: Ժողովի օրինականության վերաբերյալ խոսելով՝ Մ. Օրմանյանը կասկածի տակ է դնում այն՝ որպես փաստ բերելով այն հանգամանքը, որ Հայոց եկեղեցին փաստացիորեն չի ունեցել տվյալ օրերին օրինական ղեկավար: Իրապես, ժողովի կազմած արձանագրությունը առաջինը որպես ավագ եպիսկոպոս ներկաների մեջ ստորագրում է Կեսարիայի եպիսկոպոս Կոստանդինը" չկար նույնիսկ մեկը, որ ստորագրած լիներ փաստաթղթի տակ որպես կաթողիկոսական տեղապահ[2]:

Անշուշտ, այս հանգամանքը կարելի է դիտարկել որպես Հեթումի բացթողում, ինչը որոշակիորեն ստվեր է նետում ընդունած փաստաթղթի օրինականության վրա: Բայց օրինակարգության հարցը այստեղ կասկածի տակ այս պարագայում չի դրվել. այսինքն՝ կա պատճառ: Այս պարագայում առավել խնդրահարույց կարող է լինել օրինակարգության տեսանկյունից «արևելից» թեմերի ներկայացուցիչների բացակայությունը: Կանոնական որևէ փաստաթուղթ, որը պարտադիր պետք է դարձներ նման ժողովների դեպքում «արևելցիների» ներկայությունը, փաստացի գոյություն չունի: Այդ փոխհարաբերությունները ըստ էության, սակայն, կանոնակարգվում էին դեռևս 12-րդ դարավերջից սկսյալ, երբ բոլոր կարևոր որոշումների ժամանակ, որոնք վերաբերում էին դավանաբանական խնդիրներին, պարտադիր պետք է մասնակից լինեին նաև բուն Հայաստանի ներկայացուցիչները[3]: Այդպես է եղել նաև 1243 և 1251 թթ. հայտնի ժողովների ժամանակ, երբ ներկա էր Վարդան Արևելցին, երբ նաև Կիլիկիայում ընդունված որոշումները հաստատվեցին հաջորդող տասնամյակների ընթացքում՝ «արևելցիների» կողմից կազմակերպված ժողովներում: Չգրված ավանդույթի սկիզբ կարելի է համարել Ներսես Շնորհալու վերաբերմունքը, որի մասին նա հստակ նշում է իր «թղթերում». «Եթէ որպէս գլուխն միայն առանց բոլոր անձին անդամոց օժանդակութեան ոչ է կարող ներգործութիւնս ինչ կատարել, նոյնպէս և մեզ անկարելի է առանց իմաստնոց համայնից՝ որ ի Հայաստանեայս մերձ լինելոյ, այսոցիկ առ ին ձէնջ խնդրոյս տալ կատարելապէս պատասխանի. Այլ ժողովելով

---

[1] Տե՛ս **Կ. Գալանոս**, նշվ. աշխ., էջ 461:

[2] Տե՛ս **Մ. Օրմանեան**, նշվ. աշխ., սյուն 2093:

[3] Տե՛ս նաև Ա. Հովհաննիսյան, Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, 2020, էջ 26:

զամենեսին յորս գոյ իմաստութիւն և երկիւղ, ի դիպող ժամու խորհեսցուք ի միասին Աստուծով»[1]:

Ոչ օրինակարգության հիմնական աղբյուր կարելի է նշել նաև հասարակության մեծ մասի կողմից ընդունած որոշումների մերժումը: Հասարակություն անվան տակ այստեղ միջնադարյան ընկալմամբ առաջին հերթին պետք է հասկանալ աշխարհիկ և հոգևոր ավատատերերին: Այս երկու հասարակական շերտերը փաստացիորեն հանդիսանում էին միջնադարյան իրավունքի լիիրավ սուբյեկտներ, իշխանության կրողներ, պատասխանատուներ, և միջնադարյան, հատկապես՝ Կիլիկյան Հայաստանում իշխանությունը բխում էր հենց նրանցից: Անշուշտ, այս ժամանակահատվածում գնալով մեծ թիվ սկսեցին կազմել եկեղեցական միության կողմնակիցները, որը նկատելիորեն եղկփեղկեց հայկական հասարակությունը, բայց այդուհանդերձ նրանք երբեք էլ չկարողացան մեծամասնություն դառնալ իրենց հասարակական շերտերի շրջանակներում: Ժողովի ընդունած որոշումները մեծ դժգոհության ալիք են բարձրացնում հայկական միջավայրում, ընդ որում՝ ոչ միայն արևելքում, այլ նաև Կիլիկիայում. բնական է, որ դժգոհությունն ավելի հատուկ էր «արևելցիներին»: Ահա թե ինչ է գրում Մովսես վարդապետը. «Սուտ ասէ, զի սակաւք էին և ոչ բազումք. Պարտ էր յամենայն Հայաստանեայս առաքել և ժողովել և թէ ամենեքեան հաանեալ էին, ապա այդպիսի նորաձևութիւն յեկեղեցի մուծանել և թէ ոչ ի բաց ընկենուլ: Որ իրավունք է այդ, ինքնահաճոյ մտաց ախորժակօք գրել և առ ամենեսեան առաքել թէ ընկալուք»[2]:

Եվ միայն մարտի 23-ին՝ ժողովի ավարտից չորս օր անց, տեղի ունեցավ Կոստանդին Կեսարացու կաթողիկոսական օծման արարողությունը: Ըստ ամենայնի՝ կաթողիկոսի ընտրությունը ևս տեղի է ունեցել մարտի 23-ին՝ նախորդելով օծմանը, և դա յուրատեսակ վարձատրություն էր Կոստանդին Կեսարացուն իր մատուցած «ծառայությունների» համար: Ինքը՝ Հեթումը, և եղբորորդի Լևոնը չկարողացան ճնշել ձևավորված հակադրությունը ժողովի ընդունած որոշումների հանդեպ. այն հսկայական էր և պարառում էր ողջ հայկական «աշխարհը»: Նրանք դավադրաբար սպանվեցին 1307թ. նոյեմբերի 17-ին մոնղոլական զորահարմանա-

---

[1] Ընդհանրական թուղթք **Ս. Ներսիսի Շնորհալւոյ,** Յերուսաղէմ, 1871, էջ 210:

[2] **Սամուէլի քահանայի Անեցւոյ**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 298:

տար Բիլարղուի կողմից, իսկ ժողովի որոշումների դեմ առկա դիմադրությունը ճնշելու և եկեղեցիների միավորման գաղափարը կենսագործելու առաքելությունը իր վրա վերցրեց Հեթումի եղբայր Օշինը, որը այդ նպատակով պետք է հետագայում հրավիրեր մի շարք ժողովներ:

Ամփոփելով վերոգրյալը՝ փաստենք, որ հայկական գործող արքունիքը՝ ի դեմս Հեթում 2-րդի, և հոգևոր վերնախավի մի մասը (որը, սակայն, այս համատեքստում հանդես էր գալիս որպես արքայի քաղաքականության կամակատար) ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում որպես պետության անվտանգության պահպանման միջոց դիտարկում էին դավանաբանական զիջումների միջոցով արևմտյան «աշխարհից» օժանդակություն ստանալը. հենց դրանով էին պայմանավորված Սսի 1307 թ. ժողովի ընդունած որոշումները: Այս քաղաքական ուղեգիծը շարունակվեց նաև հաջորդող առնվազն երեք գահակալների շրջանում, որը, սակայն, չկարողացավ ապահովել հայոց թագավորության անվտանգ գոյությունը:

Բանալի բառեր- *միարար, դավանանք, թագավոր, կաթողիկոս, փարաձաշրջան, իլղանություն, արևելյան թեմեր, պապ, իշխան, եկեղեցի, դիվանագիտություն*

НАЧАЛО ПРОТИВОСОСТОАНИЯ МЕЖДУ УНИАТАМИ И ПРОТИВНИКАМИ УНИЙ В НАЧАЛЕ 14-ГО ВЕКА И СИССКИЙ СОБОР 1307 Г.

Давид Тиноян

Ключевые слова *униат, вероучение, царь, католикос, регион, ильханство, восточные епархии, папа, князь, церковь, дипломатия*

Конец 13-го начало 14-го века является одним из ключевых периодов в истории Армении и особенно киликийского царства. Период царствования Хетума IIбыл отмечен проявлением беспрецедентной ситуации в армянском обществе: формированием противоположных течений, сторонники и противники объединения с католической церковью. Хетум считается довольно противоречивой фигурой, на самом деле он был одним из немногих монархов в истории Армений, который не только не был помазан но и фактически управлял государством имея при этом другое вероучение. Основываясь на этом, он провел большую часть своей сознательной жизни на создание унии с католической

церковью. В этом деле ему помогал католикос всех армян Григор Анаварзаци. Следует отметить, однако, что политика Хетума была не только результатом его духовных устремлений, но и скорее всего поиска выхода из геополитической ситуации в которой вышепомянутом этапе находилось Киликийское государство. Внешняя безопасность государства была в значительной степени обусловлена союзом с монголами, союз который постепенно распадалась. Углубление политических отношений с Европой рассматривалось как уникальная опора безопасности. Эта политика стала своеобразной Ideafix следующих армянских царей одновременно разделив общество на сторонников и противников объединения с католической церковью.

THE BEGINING OF UNITARY AND ANTI-UNITARY STRUGGLE IN THE EARLY 14TH CENTURY AND THE CONVENTION OF SIS IN 1307

David Tinoyan

The dividing line of the 13th and 14th centuries is considered to be one of the pivotal periods in the Armenian history, especially when Cilician events are to be considered. The period of Hethum II's intercession was marked by the formation of opposing currents in the Armenian reality, an unprecedented phenomenon of the doctrinal problem within society. Those were currents to be given the names of unitary and anti-unitary. Hethum is considered rather a contradictory figure among the Armenian kings. He was, in fact, one of the exceptional monarchs who was not only ordained unofficially, but actually ruled a realm, being this under the auspices of the Apostolic Church, having himself a different faith. Based on this, he did everything in his conscious life, both during his enthronement and the period his nephew, the young Levon IV was ruling, to form a union with the Catholic Church. He was assisted by the bishop of Anavarza and then the Catholicos of All Armenians, Grigor. It should be noted, however, that Hethum's policy was not the result of his spiritual aspirations, but the consequence of seeking a way out of the created geopolitical situation of the Cilician elite. The external security of the Armenian kingdom was largely conditioned by the alliance with the Mongols, which did not exist at that time, and the deepening of political relations with Europe was seen as a unique pillar of security. This policy became characteristic of the policy of the subsequent four decades of the Armenian kingdom, at the same time splitting society between supporters and opponents of unification with the Catholic Church.